



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
S 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապես հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

АРТУР АЙРУМЯН

ПОКАЗАТЕЛИ ДИНАМИКИ ДОЛЛАРИЗАЦИИ В РА 2014–2017 ГГ.

Ключевые слова: долларизация, замена активов, замена валюты, долларизация финансового сектора, нестабильность в макроэкономической среде, реальный сектор, финансовый сектор

В разнх стран мира с переходной экономикой, недоверие к национальной валюте и нестабильность в макроэкономической среде настаивают над экономических субъектов заменять национальную валюту к боле надёжной валюте других стран. В переходном этапе экономика Армении и в том случае не избежала от долларизации. Долларизация началось и углубилась в реальном и в финансовом секторе. Я попытался выяснить какие факторы изменили динамику долларизации в 2014–2017 годы.

ARTUR AYRUMYAN

THE DYNAMICS OF THE INDICATORS OF DOLLARIZATION IN THE RA IN 2014–2017

Key words: dollarization, asset substitution, currency substitution, dollarization of financial sector, macroeconomic instability, real sector, financial sector

In different countries with economies in transition, lack of confidence in the national currency and variability in the macroeconomic environment insist economic entities to change national currency to other more reliable currency of other countries. In the transition period the Armenian economy also could not escape from dollarization. It began and deepened both in financial and real sectors. I tried to find out what factors have changed the dynamics of dollarization during 2014–2017 periods.

ԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. վարկային համակարգ, ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ մոտեցում, բանկեր, ոչ բանկային վարկային կազմակերպություններ, դասակարգում, մասնագիտացում

Վարկային համակարգը դիտարկվել է երկու տեսանկյունից՝ ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ: Վերջինիս դեպքում ՀՀ-ում վարկային համակարգի կազմում ճիշտ կլինե՞ր ընդգրկել բանկերը և ոչ բանկային վարկային կազմակերպությունները, որոնք էլ կարող են դասակարգվել ըստ մի շարք հատկանիշների: Ներկայումս դա կատարվում է՝ ելնելով իրականացված

նացվող գործառնությունների բնույթից, սակայն այսպեղ որպես չափանիշ կարող են առանձնացվել նաև գործունեության նպատակը և ոլորտը:

Վարկային համակարգը, ընդհանուր առմամբ, բնութագրվում է որպես վարկային հարաբերությունների և ինստիտուտների ամբողջություն, որտեղ առավել նպատակահարմար է առանձնացնել երկու մոտեցում՝ ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ: Ֆունկցիոնալի դեպքում վարկային համակարգը վարկի ձևերի, տեսակների, վարկավորման մեթոդների և սկզբունքների ամբողջություն է, իսկ ինստիտուցիոնալի դեպքում՝ վարկային և ֆինանսական կազմակերպությունների ամբողջություն, որը սպասարկում է վարկային բնույթի հարաբերություններ: Այդ կազմակերպությունները փոխկապակցված են և կազմում են որոշակի հիերարխիկ (աստիճանակարգային) համակարգ: Ընդ որում, եթե ֆունկցիոնալ տեսանկյունից մոտեցումը միանշանակ է, ապա ինստիտուցիոնալ մոտեցման դեպքում առաջանում են որոշակի խնդիրներ, որոնք պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ: Այդ առումով, վարկային համակարգն ամենուրեք ներկայացված է բանկերով և ոչ բանկային վարկային կազմակերպություններով, ուր գերակշիռ դեր ունեն բանկերը: Այսպես՝ բոլոր երկրներում առևտրային բանկերի ակտիվները կազմում են ֆինանսական շուկայի ակտիվների շուրջ չորրորդ մասից ավելին¹: ՀՀ-ում ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների 30.06.2016 թ. դրությամբ կազմել է բանկեր՝ 88,4%, վարկային կազմակերպություններ՝ 8,4%², իսկ մնացած 3,2%-ը բաժին է ընկնում ապահովագրական, ներդրումային ընկերություններին և այլ ֆինանսական կազմակերպությունների: Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն ոչ բանկային վարկային կազմակերպությունների տարբեր տեսակներ՝ առկա է դրանց լայն բազմազանություն, ուստի անհրաժեշտություն է առաջանում կատարելու դրանց դասակարգում: Այսպես՝ ՌԴ-ում, ըստ բանկերի մասին օրենքի առաջին հոդվածի, բոլոր վարկային կազմակերպությունները բաժանվում են երկու տեսակի՝ բանկեր, որոնց կազմում առանձնացվում են օտարերկրյա բանկերը, և ոչ բանկային վարկային կազմակերպություններ (ոչ բանկ): Ի տարբերություն դրան, ՀՀ-ում նման տարանջատումը բացակայում է, այսինքն՝ բանկը չի դասվում որպես վարկային կազմակերպություն: Համաձայն ՀՀ բանկերի և բանկային գործունեության մասին օրենքի 4-րդ հոդվածի՝ բանկն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի իրականացնելու բանկային գործունեություն: Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը, ինչպես նաև սահմանված կարգով տարբեր կարգի ֆինանսական գործառնություններ իրականացնել: Այսպիսով՝ բանկ է համարվում այն իրավաբանական անձը, որն իրավունք է ստանում իրականացնելու օրենքով սահմանված գործառնությունների բոլոր տեսակները:

Վարկային կազմակերպությունը, համաձայն «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, լիցենզիա ստացած իրավաբանական անձ է, որն

¹ http://e-lib.gasu.ru/eposobia/shvakov/R_2_4.html

² ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն 2016, 1-ին կիսամյակ, էջ 31:

իրավունք ունի իրականացնելու օրենքով սահմանված գործունեության տեսակները: Վարկային կազմակերպության գործունեություն է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն փոխառություններ ներգրավելը և (կամ) նմանատիպ գործարքներ կնքելը և (կամ) վարկեր տրամադրելը կամ օրենքով սահմանված այլ ներդրումներ կատարելը: Առանձնացվում են վարկային կազմակերպությունների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են վարկային միությունները, որոնք դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից և դրանք տրամադրում նրանց, իսկ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում դրամական միջոցներ են ներգրավում նաև այլ անձանցից կամ դրանք տրամադրում վերջիններիս, խնայողական միությունները, որոնք դրամական միջոցներ են ներգրավում իրենց մասնակիցներից և դրանք տրամադրում են նրանց, ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող այլ վարկային կազմակերպությունները: Ոչ բանկային վարկային կազմակերպությունը չի կարող իրականացնել հաճախորդների հաշվարկային սպասարկումը, այդ թվում հաշիվների բացումը և վարումը, միջոցների փոխանցումը, ինչպես նաև միջոցների ներգրավումն ավանդների տեսքով: Այսպիսով վարկային կազմակերպություններն իրավունք են ստանում կատարելու միայն բանկային գործառնությունների առանձին տեսակներ, և այս մոտեցման դեպքում բանկ չհանդիսացող և ֆինանսական գործունեության ցանկացած տեսակ իրականացնող կազմակերպությունը կարող է համարվել վարկային կազմակերպություն:

Ի տարբերություն դրան, ՌԴ-ում վարկային կազմակերպություններն առանձնացվում են ըստ իրականացվող գործառնությունների տեսակների: Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՌԴ օրենքի (հ.1)՝ վարկային կազմակերպությունն իրավաբանական անձ է, որն իրավունք ունի իրականացնելու օրենքով նախատեսված բանկային գործառնություններ: Ըստ օրենքի՝ վարկային կազմակերպություններ են բանկերը և ոչ բանկային վարկային կազմակերպությունները: Բանկը վարկային կազմակերպություն է, որը բացառիկ իրավունք ունի իրականացնելու բանկային գործառնությունների հետևյալ ամբողջությունը՝ ավանդների տեսքով իրավաբանական, ֆիզիկական անձանց դրամական միջոցների ներգրավում, դրանց տեղաբաշխում իր անունից և իր հաշվին, իրավաբանական անձանց բանկային հաշիվների բացում և վարում: Ոչ բանկային վարկային կազմակերպությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով իրականացնելու բանկային գործառնությունների առանձին տեսակներ («Բանկերի և բանկային գործունեության մասին» ՌԴ օրենք, հ.1): Բանկերի և ոչ բանկային վարկային կազմակերպությունների հիմնական տարբերությունն այն է, որ բանկն իրավունք ունի իրականացնելու օրենքով սահմանված բանկային գործառնությունների բոլոր տեսակները (նույն օրենքը, հ.5), վերը նշված երեքի ամբողջությունը պարտադիր է: Միաժամանակ, ըստ ՌԴ օրենսդրության, հստակ սահմանազատված են գործառնությունների տեսակները, որոնք կարող են կատարել ոչ բանկային կազմակերպությունները:

ՌԴ-ում ոչ բանկային վարկային կազմակերպությունները բաժանվում են ըստ դեպոզիտայինի, հաշվարկայինի, վճարայինի: Հաշվարկային ոչ բանկային կազմակերպությունը իրավունք ունի իրականացնելու հիմնականում բանկային գործառնությունների հետևյալ տեսակները՝ իրավաբանական անձանց բանկային հաշիվների բացում և վարում, իրավաբանական անձանց հանձնարարությամբ և նրանց հաշիվների միջոցով հաշվարկների կատարում, դրամական միջոցների ինկասացիա և այլն: Այլ կերպ ասած, հաշվարկային վարկային կազմակերպությունն իրավունք չունի ներգրավելու ավանդներ և տրամադրելու վարկեր, այն ապահովում է հաշվարկները և փոխանցումները: Դեպոզիտային վարկային ոչ բանկային կազմակերպությունն իրավունք ունի իրականացնելու իրավաբանական անձանց դրամական միջոցների ներգրավում, տեղաբաշխում իր անունից և իր ռիսկով, արտարժույթի առք ու վաճառք, բանկային երաշխիքների տրամադրում: Առանձնացված են նաև վճարային ոչ բանկային վարկային կազմակերպությունները: Վճարային կազմակերպություններն իրականացնում են դրամական միջոցների փոխանցումներ առանց հաշիվների բացման և դրանց հետ կապված այլ բանկային գործառնություններ: Այսպիսով՝ կարելի է նշել, որ ոչ բանկային վարկային կազմակերպությունների գործառնությունների նկատմամբ սահմանափակումները սահմանված են հիմնականում ֆիզիկական անձանց հետ իրականացվող գործառնությունների մասով: ՌԴ ոչ բանկային վարկային կազմակերպություններն ունեն նեղ մասնագիտացում՝ հիմնականում հաշվարկների իրականացման ոլորտում:

Նպատակահարմար կլիներ ՀՀ-ում վարկային համակարգի կազմում նույնպես ընդգրկել բանկերը, առանձնացնելով դրանք որպես վարկային բնույթի գործառնությունների ամենալայն օղակներ և ոչ բանկային վարկային կազմակերպություններ, որոնք էլ կարող են դասակարգվել ըստ մի շարք հատկանիշների: Ներկայումս դա կատարվում է ըստ գործառնությունների տեսակի, սակայն այստեղ, որպես չափանիշ, կարող են առանձնացվել նաև գործունեության նպատակը և ոլորտը: Դա թույլ կտա ավելի նպատակաուղղված դարձնել գործունեությունը, հաճախորդին մատուցել ավելի բարձր որակի ծառայություններ: Տարբեր նպատակների համար կարող են ձևավորվել համապատասխան վարկային կազմակերպություններ, օրինակ՝ հիփոթեքային, կրթական սպառողական, գյուղատնտեսության վարկավորման և այլն: Միաժամանակ, ելնելով ոլորտի կարևորությունից և նշանակությունից, երկրի զարգացման համար պետությունը կարող է սահմանել այստեղ որոշակի արտոնություններ: Բացի այդ, բանկային մրցակցության սրման, նոր բանկային պրոդուկտների մշակման անհրաժեշտության պայմաններում կարևոր է դառնում, որ բանկերն ավելի խորությամբ և համակողմանիորեն ուսումնասիրեն վարկավորման օբյեկտը, վարկառուի վարկունակությունը, դրա առանձնահատկությունները և այլն: Միաժամանակ, օրենսդրական պահանջները ոչ բանկային վարկային կազմակերպությունների նկատմամբ ավելի մեղմ են, քան բանկերի, ինչը պայմանավորված է գործառնությունների ավելի ցածր ռիսկայնությամբ: Ոչ բանկային վարկային կազմակերպությունների հիմնական տարբերությունը բանկերից դրանց իրավասությունների և հնարավորությունների խիստ սահմանափակումն է: Այսինքն՝ ներկայումս հնարավոր չէ մեկ բանկի միջոցով լիարժեք իրակա-

նացնել գործառնությունների և ծառայությունների բոլոր տեսակները, առաջարկել հաճախորդին նրա գործունեությանը նպաստող առավել բարենպաստ պայմաններ: Այսպիսով՝ արդիական է դառնում մասնագիտացված վարկային կազմակերպությունների ստեղծումը, որոնք կլինեն ավելի օպերատիվ և արդյունավետ, հետևաբար՝ նպատակահարմար կլինի ընդլայնել վարկային կազմակերպությունների ցանցը:

АННА АСЛАНЯН

СТРУКТУРНЫЕ ПРОБЛЕМЫ КРЕДИТНОЙ СИСТЕМЫ

Ключевые слова: кредитная система, функциональный и институциональный подход, банки, небанковские кредитные организации, классификация, специализация.

Кредитная система - сложная категория. Наиболее целесообразно здесь выделить два подхода: функциональный и институциональный. При институциональном подходе в РА в состав кредитной системы целесообразно было бы включить банки и небанковские кредитные организации, последние должны быть классифицированы по ряду признаков.

ANNA ASLANYAN

STRUCTURAL PROBLEMS OF CREDIT SYSTEM

Key words: credit system, functional and institutional approach, banks, non-bank credit organizations, classification, specialization.

Entity of crediting system are a complex category. It makes sense to separate two approaches – institutional and functional. In institutional approach in RA it makes sense to include in the composition bank and non-bank credit organizations, which in turn should be classified by a number of characteristics. Currently it is done based on the type of credit relationships, though as a criteria here aim and business field can be used.

НАРИНЕ АВАНЕСЯН

Кандидат экономических наук, доцент, АрГУ

НЕОБСЛУЖИВАЕМЫЕ КРЕДИТЫ БАНКОВ, КАК РИСК, ВОЗДЕЙСТВУЮЩИЙ НА СТАБИЛЬНОСТЬ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ

Ключевые слова: финансовая стабильность, коммерческие банки, нерабочие кредиты, NPL, кредитные активы, классификация кредитов

Важным для оценки финансовой стабильности Армении, является выявление и оценка рисков, связанных с деятельностью банков. Существование больших объемов